ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ _____ « _____ » _____ 201 թ.

Ձեր

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար Է.ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աղաջանյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 24.01.2019թ. թիվ 02/05.4/2591-2019 հանձնարարականի՝ տեղեկացվում է, որ ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված բոլոր օրենսդրական նախաձեռնությունների՝ ՀՀ Ազգային ժողովում հետագա քննարկման անհրաժեշտությունն առկա է:

Միաժամանակ, առաջարկվում է *«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրինագծերի փաթեթը (Կ-405-25.10.2018-ՊԻՄԻ) Ազգային ժողովում քննարկելիս համարել անհետաձգելի*, քանի որ նախաձեռնության նպատակն է հին նմուշի (1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված)՝ ոչ բիոմետրիկ տվյալներով անձնագրերը ՀՀ քաղաքացիներին տրամադրելու վերջնաժամկետը երկարաձգել մինչև 2020 թվականի հունվարի 1-ը:

ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված բոլոր օրինագծերը ՀՀ Ազգային ժողովում քննարկելիս որպես ՀՀ Կառավարության ներկայացուցիչ առաջարկվում է ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Հ. Քոչարյանի թեկնածությունը:

Կից ներկայացվում է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական

իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (24/11/2017 , Կ-192-27.11.2017-ՊԱ) օրինագծերի լրամշակված փաթեթը, ինչպես նաև օրենսդրական նախաձեռնությունների՝ ՀՀ ԱԺ-ում քննարկման նախընտրելի ժամկետների վերաբերյալ տեղեկանքը:

Առդիր՝ 2 ֆայլ:

Հարգանքով՝

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ **Վ.ՕՍԻՊՅԱՆ**

Իրավաբանական վարչություն
հեռ. 010-59-60-64